ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության պետի

պարտականությունները կատարող

Իրինա Դավթյանին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՆԳՆ միգրացիայի և քաղաքացիության ծառայության փորձագետ

(22.03.2026 – 22.06.2026 թթ.)

2026 թ. մարտի 22-ից 2026 թ. հունիսի 22-ը ընկած ժամանակահատվածում ՀՀ ՆԳՆ ՄՔԾ փորձագետ Անի Վահագնի Ղուկասյանի կողմից կատարվել են հետևյալ աշխատանքները.

1. Կազմակերպել եմ հանդիպումներ ՄՔԾ կողմից իրականացվող թվայնացման նախագծերի շրջանակներում միջազգային կազմակերպությունների, մատակարարների, փորձագիտական խմբերի և ՄՔԾ համապատասխան ստորաբաժանումների հետ.
2. Իրականացնել եմ նախագծերի իրականացման մոնիթորինգ և արդյունքների մասին զեկույցի պատրաստում և ներկայացրել ՄՔԾ ղեկավարությանը.

ա. բնակչության պետական ռեգիստրի նոր համակարգի ձևավորման, Օտարերկրացիներին կացության կարգավիճակի տրամադրման միասնական էլեկտրոնային հարթակի ձևավորման, Ապաստանի գործերի կառավարման, Քաղաքացիության գործերի կառավարման էլեկտրոնային համակարգի և այլ համակարգերի մշակման, թեստավորման, տեղակայման աշխատանքների վերաբերյալ կազմել եմ հաշվետվություններ և ներկայացրել ՄՔԾ ղեկավարությանը.

բ. նշված համակարգերի մշակման, ներառյալ իրավական հիմքերի ձևավորման համար ներգրավված մասնագետների և մատակարարների հետ

կազմակերպել եմ հանդիպումներ, մշակել եմ հանդիպումների օրակարգերը և համաձայնեցրել ՄՔԾ ղեկավարության հետ:

գ.մասնակցել եմ ՄՔԾ-ում տեղեկատվական անվտանգության համակարգի ձևավորման աշխատանքներին.

3. Մասնակցել եմ Նոր բիոմետրիկ փաստաթղթերի տրամադրման համակարգի ներդրման պետություն մասնավոր գործընկերության պայմանագրի շրջանակներում աշխատանքների իրականացման համար ստեղծված աշխատանքային թվով 5 խմբերի աշխատանքներին.

ա. կազմակերպել եմ աշխատանքային խմբերի հանդիպումները

բ. իրականացրել եմ աշխատանքային խմբերի անդամների միջև գրագրության կազմակերպմանը.

գ. հետևել եմ աշխատանքային խմբերի հանդիպումների ընթացքում ձեռք բերված պայմանավորվածությունների և որոշված վերջնաժամկետների պահպանմանը.

դ.իրականացրել եմ աշխատանքային փաստաթղթերի թարգմանություն.

ե. պատրաստել և հաստատման եմ ներկայացրել ՄՔԾ անունից պատրաստվող գրությունները.

4. Մասնակցել եմ ՄՔԾ նոր տեղեկատվական համակարգերի ճարտարապետության ձևավորման և տեղակայման նախագծի մշակման և իրականացման աշխատանքներին:
5. Իրականացրել եմ տեխնիկական աջակցություն և խորհրդատվություն ՄՔԾ քաղաքացիության բաժնի աշխատակիցներին Քաղաքացիության գործերի կառավարման էլեկտրոնային համակարգի աշխատանքի վերաբերյալ
6. Մասնակցել եմ ՀՀ-ում կացության կարգավիճակ ստանալու նոր էլետրոնային համակարգի նախագծման աշխատանքներին

ՀՀ ՆԳՆ ՄՔԾ փորձագետ

.............................. Ա. Ղուկասյան

«10» հուլիս 2026 թ.

Հաշվետու ժամանակահատվածում կատարած աշխատանքները

գնահատում եմ « գերազանց»

ՀՀ ՆԳՆ ՄՔԾ պետի

պարտականությունները կատարող

Իրինա Դավթյան ..............................

«10» հուլիս 2026 թ.